«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Գոհար Ասոյան

Մանկապարտեզ՝ «Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքի համայնքապետարանի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 2
ԳԼՈՒԽ 1. 4
ԳԼՈՒԽ 2..... 10
Եզրակացություն 19
Գրականության ցանկ..... 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում ապրող երախայի մեջ շատ քիչ են պահպանվում այդ սովորությունները, ինչու՞ երեխայի,որովհետև դրա վառ կրողը նա է:

Ուսումնական համակարգի հենց առաջին օղակից մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց,շրջապատի և վերջապես գեղեցկության նկատմամբ: Այստեղ նրա մեջ սերմանվելու է մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները: Հայ երեխայի հոգում բարության և առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է:

Մեր ծեսերը,սակայն, դարերի ընթացքում մի շարք փոփոխությունների են ենթարկվել, իսկ որոշներն էլ դուրս են եկել շարքից: Ուստի անհրաժեշտություն կա հայկական ծեսերը մոռացության չմատնելու, որովհետև դա ազգի հարստության հիմքերից մեկն ու մշակույթային մեծ ժառանգությունն է:

Կարևորելով վերոնշյալը՝ որպես գործնական աշխատանքի թեմա վերցրել ենք «Ազգային տոների ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում», որի արդիականությունը փաստվում է նրանով, որ ծեսերը մեզ են հասել դեռևս անտիկ շրջանից, իսկ յուրաքանչյուր ազգ ունի իր ազգային ծեսերը և դրանք կազմակերպելու և իրականացնելու սովորույթները:

Թեմայի նպատակն է նախադպրոցական տարիքի երախաներին՝

- Ներկայացնել ծեսերը
- Բացատրել ծեսերի նշանակությունը
- Հիմնավորել ծեսերի արդիականությունը
- Բովանդակությունը
- Ներկայացնել հայկական ավանդույթների հիմնական կապերը ծեսերի հետ:

Երեխաներին ծեսերի իրականացման գործում ներգրավվելու և հետաքրքրություն առաջնելու համար անհրաժեշտ է կազմակերպել՝

- Դերային խաղեր
- Էքսկուրսիաներ
- Փոքրիկ միջոցառումներ
- Պարապմունքներ

Գործնական աշխատանքը ունի ներածական մաս,երկու գլուխ և եզրակացություն: Առաջին գլուխում անդրադարձել ենք ազգային տոների դերին՝ երեխաների էկոլոգիական դաստիարակության ձևավորման գործում, ին՞չ է իրենից ներկայացնում ծեսը, ինչպե՞ս ենք այն իրականացնում, ի՞նչ կարող ենք սովորել ծեսի միջոցով: Ներկայացրել ենք ծեսի իմաստը, դերը և նշակությունը:

Երկրորդ գլխում ներկայացրել ենք ծեսի գործնական մասը: Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական,անկաշկանդ,ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը:Ներկայացրել եմ Սուրբ Զատիկի տոնակատարությունը որպես հայեցի դաստիարակության յուրահատուկ միջոց:

Ժողովրդական մանկավարժությունը պահպանել է իր դիրքերը մինչև այսօր,- պնդում է ակադեմիկոս Գ.Ն.Վոլկովը,- անմահ են նրա միջոցները երգերը,հեքիաթները, ասույթները ու ասացվածքնեռը,ազգային տոները:

ԳԼՈՒԽ 1.

Ազգային տոների դերը երեխաների էկոլոգիական դաստիարակության ձևավորման գործում:

Անձի էկոլոգիական կրթությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է,որը բխում է մարդ-հասարակություն-բնություն փոխազդեցության պահանջներից:

Մարդու,հատկապես երեխայի կյանքը թերարժեք է դառնում առանց բնության հետ մշտական շփման:

Վ.Ա.Սուխոմլինսկին նշել է Բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք է ձևավորվում միայն այն դեպքում,երբ երեխան ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բնապահպանական աշխատանքներին: ԵՎ այն դառնում էավելի բովանդակալից,երբ ուսուցման գործընթացը իրականացվում է ոչ թե մեկուսացած ձևով, այլև կապվում է հարազատ երկրի պատմության ուսումնասիրության հետ:

Հսկայական դաստիարակչական ներուժ ունեն ազգային տոները, որը փառաբանում է բնությունը,բնության ամեն մի մասնիկը: Այդպիսի տոներից են Ամանորը, Ծաղկազաչդը, Համբարձումը, Վարդավառը, Խաղողօրհնեքը, Բարեկենդանը:

Ամանորը Հայաստանում ամենասիրված ու ժողովրդականություն վայելող տոներից մեկն է: Տարբեր ժամանակներում հայերը ունեցել են երեք նոր տարի,որ կոչվում են Նավասարդ, Ամանոր կամ Կաղանդ:

Այս տոները տարբեր ժամանակներում նշել են տարբեր օրերին,մարտի 21-ին, օգոստոսի 11-ին,հունվարին:

Հայերի մոտ թերևս ամենաավանդական նոր տարին նշվում էր մարտր 21-ին: Այս տոնը նաև Ծաղկըմուտ է կոչվել,վկայակոչելով գարնան գալուստը: Այդ օրը հայորդիները նշել են Վահագնի ծնունդը:Ամանոր բառը նշանակում է նոր տարի: Բառի ծագումնաբանությունը բխում է բնապաշտական աստծուց,որը հենց մարմնավորում է նոչ-տարին/երկրի և մոլորակների պտույտը:

Հունվարի 1-ը օրացույցային նոր տարին է, իսկ հայոց եկեղեցին հունվարի 6-ը նշում է Սուրբ Ծնունդ:

Հայոց դիցարանում Ամանորը պտղաբերության,բերքը պահպանող աստվածն էր: Ամանորի եղբայր Վանատուրը հյուրընկալության աստվածն էր, և նոր տարին նվիրված էր Ամանորին ու Վանատուրին:

Ավանդաբար ամանորյա նախապատրաստություններն սկսվում էին տան ու բակի մաքրությունից: Այս արարողություններին մասնակցում էին ընտանիքի բոլոր անդամները: Հունվարի 1-ի գիշերը աղբյուրից բերած ջրով լվացվում էր թոնրի շուրջ հավաքված ընտանիքը: Մինչ օրս էլ տարեմուտից առաջ ամբողջ տունը մաքրվում է և թարմացվում: Տարեմուտի նախօրյակին կատարվող մաքրագործման արարողություններն ու ծեսերը գալիս են բնապաշտական ժամանակներից և հատուկ են բազում ժողովրդների: Տարվա նորոգումը, վերածնունդը խորհրդանշական կապ ունի մարմնական մաքրության և հոգևոր սրբության հետ սուրբ բառը ևս նշանակում է մաքուր,անարատ: Մաքրագործման արարողությունները նաև ներքին, հոգևոր բնույթ էր կրում: Լոռիում,օրինակ, տանտիկինը մեղր էր քսում ընտանիքի բոլոր անդամների բերաններին, իսկ Համշենում կծու կերակուր ուտելը արգելվում էր, թթու խոսք ասելը նույնպես: Այս սովորությունը կապում էին խոսքի մոգության հետ: Համարվում էր, որ անցումային օրը յուրաքանչյուր չար խոսք կարող էր չարիք բերել ամբողջ տարվա համար:

Ընտանիքի բոլոր անդամները պետք է նոր զգեստներ հագնեին: Ընդունված էր գժտվածներին հաշտեցնել թե տանը, թե հասարակական միջավայրում: Տոնի առթիվ թարմ հաց էին թխում , նույնիսկ եթե տանը կար հին հաց:

Ավանդական սովորության համաձայն, Ամանորի գիշերը շատերի տներում ճրագ էր վառվում, որպեսզի տան հաջողությունը չփախչեր: Առավոտյան տան դուռը առաջինը տան մեծն էր բացում, որպեսզի հաջողությունը տնից անպակաս լինի: Վաղ առավոտյան նոր բերած ջուրը լցնում էին տան անկյունները՝ տան առատությունը ապահովելու համար: Միմյանց նվերներ էին տալիս, հատկապես մեծերը փոքրերին: Ամանորին տան դուռը երբեք չէր փակվում , լույսերը չէին մարում:

Ճիշտ է, Ամանորի եղևնին հայկական ծագում չունի, սակայն հայերի մոտ վաղնջական ժամանակներից ծառի պաշտամունք է ռղել: Մասնավորապես, հայ գրականության մեջ առանձնահատուկ է եղել սոսենու, ուռենու, բարդու և կաղնու

պաշտամունքը: Մրգերով ու չրերով զարդարված կենաց ծառը եղել է տոնի խորհրդանիշը և հավանաբար կաղանդ բառն առաջացել է կախելու գործընթացից:

Նոր տարվա երեկոյան ձիթենու համեմատաբար հաստ ճյուղերը խրել են նախապես թխված մեծ հացի կամ բաղարջի մեջ: Այդ ճյուղը կոչվել է կաղանդի ծառ: Տան անդամները ընդեղենով զարդարում էին ճյուղը, այնուհետև տանտերը ճյուղը տանում էր եկեղեցի, քահանան օրհնում էր, իսկ հետո այն բերում էին տուն և ամրացնում գերանին: Տոնածառի խաղալիքները հասկերից, ընդեղենից պատրաստված խաղալիքներ էին: Այսպիսով ամեն ընտանիք իր համար պատրաստում էր կենաց ծառը:

Կենաց ծառի կողքին կար ևս մեկ, ավելի փոքր ծառ, որի վրա մոմեր էին դրված: Այդ ծառը կոչվում էր <չաթալ ծառ>: Չաթալ ծառի վրա ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է իր համար մոմ վառեր: Իսկ տան մեծ մամիկի մոմը պետք է առանձնահատուկ լիներ: հին ժամանակներում Ամանորի գիշերը, երբ հավաքվում էին երեխաները, սկսում էին մամիկից չիր ու չամիչ ուզել: Սակայն եթե մամիկի տվածը բավական չէր երեխաների համար, նրանք ցորենի հատիկներ էին գցում
մամիկի վառած մոմի վրա՝ փորձելով հանգցնել: Եվ մամիկը ստիպված նրանց կրկին անուշեղեն էր տալիս:

Հայերն ունեցել են նաև իրենց <Ձմեռ պապը>՝ հանձինս կաղանդ պապի, կամ մեծ Պապուկի,որը սակայն,ավելի շատ Բարեկենդանի տոնի կերպար էր, քան Ամանորի:
Տարեմուտի գիշերը երեխաների խմբերը պարելով շրջում էին փողոցներով և որևէ մեկի տանը մոտենալիս երգում էին:Երգերի բովանդակությունը պարունակում էր բարեմաղթանքներ, ընտանիքի անդամների գովք և տոնական կերակրատեսակների խնդրանք: Նրանք գոտիներով երդիկից փոքր տոպրակներ էին իջեցնում, որոնց մեջ տան մամիկը դնում էր մրգեր,հատուկ այդ նպատակով թխված խմորողեն, ընդեղեն, չամիչ և այլն: Երեխաները ստանալով անուշեղենը, դրանց փոխարեն հայցում էին երկնքի բարի ուժերի հաճությունը:
Ամանորը հայոց սիրված տոներից է և նրան երկար և հանգամանալից են պատրաստվում: Հայ ազգային տոներից է Ծաղկազարդը,որը նվիրված է գարնանը,բնության զարթոնքին: Հայաստանի եկեղեցիներն այդ օրը զարդարում են եղևնու և ուռենու ծաղկած

ճյուղերով,որոնք Ս.Պատարագի ժամանակ օրհնվում և բաժանվում է ժողովրդին:Սա շարժական տոն է և նշվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ:Համաձայն քրիստոնական եկեղեցու՝ տոնը խորհրդանշում է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ:

Ինչպես ավանդապատումն է պատմում,Արա Գեղեցիկի սպանությունից հետո Շամիրամը նրա դին դնում է բարձր լեռան գագաթին,որպեսզի արալեզները նրան կենդանացնեն: Այսինքն՝Արա Գեղեցիկը խորհուրդն է մեռնող և հարություն առնող բնության, և Ծաղկազարդը ի սկզբանե նվիրված էր հենց նրան:

Այս տոնը գարնան դիմավորումն է. ամեն ինչ վերածնվում է,արթնանում,զարթոնք է ապրում կյանքը: Ծաղկազարդը հոգեկան զարթոնքի,գեղեցիկի,բարության, հաղթանակի անվերապահ ավետումն է,տոն, որը միշտ հայ մարդու հետ է: Այն նաև Նուրի աստվածուհուն նվիրված տոն էր: Քանի որ Քրիստոնեության մուտքից հետո հին տոտեմներն արգելվեցին, ժողովուրդը հին աստվածությունները պահպանեց տիկնիկների ձևով: Նուրին պատկերված որպես խատուտիկ տիկնիկ, որի աչքերից կաթիլներ է թափվում: Նուրին նաև անձրևի հովանավոր աստվածուհին էր և երաշտի ժամանակ գյուղացիները Նուրիին պտտեցնում էին համայնքում՝ որպեսզի նա անձրև պարգևի մարդկանց: Երեխաները Նուրիի տիկնիկը ձեռքներին շրջում էին տնետուն, փողոցներով ու երգում.

-Նուրին-Նուրին էկել ա,

Շալե շապիք հագել ա,

Կարմիր գոտին կապել ա,

Ձու բերեք թաթին դնենք

Եղ բերեք սրտին քսենք….

Երեխաներից մեկը զամբյուղ է պահում իր մոտ, որի մեջ տանտերերը ուտելիք ու գումար են դնում, ճանապարհելիս ջրում: Վերջում հավաքած համայնական միջոցներով գառ են գնում, մատաղ անում, տոնը նշում երգով ու ուրախությամբ:

Հայ ազգային բնապաշտական տոն է Համբարձման տոնը: Այն բարի ավետիսի, ուրախության, բնության զարթոնքի , ծառ ու ծաղկի փթթման հիշատակի օր է:

Քրիստոնեական եկեղեցին Համբարձման տոնը կապում է Հիսուսի վերակենդանացման և երկինք համբարձվելու հետ: Այն լավատեսական, երիտասարդական տոն է. այդ տոնին մեծ տեղ է վերապահված վարդի գովերգությանը: Երիտասարդ աղջիկները խայտաբղետ, վառ հագուստներով սովորաբար կարմիր ու կանաչ գույնի, բնության գրկում զբոսանքներ են կազմակերպում, որի ընթացքում հնչում է <ջան գյուլումները>: Աղջիկները հավաքում են տարբեր տեսակի ծաղիկներ, պսակներ են հյուսում, ծաղկեփնջեր են կապում: Տեղի է ունենում ծառ ու ծաղկի և բնության բանաստեղծական գովաբանություն:

Հովհաննես Թումանյանի պատկերավոր նկարագրությամբ Համբարձման առավոտը ամբողջանում է ժողովրդական ծիսակատարության գեղեցիկ նկարագրությամբ:

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Զուգել են հանդես նախշուն գորգերով:

Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան

Վիճակ հանելու աշխույժ երգերով:

Համբարձման տոնակատարությունը մեզ մոտ տևում է մեկ շաբաթ:

Ծաղիկներ ենք հավաքում, պսակներ հյուսում, յոթ աղբյուրից ջուր վերցնում: Տոնական օրվա առավոտյան երեխաները երգելով ջանգյուլումի երգերը՝ ծնողների ուղեկցությամբ այցելում են յոթ տուն: Յուրաքանչյուր տան բակում երգում են ջանգյուլումի մաղթանքները, տան գլխավոր անդամին նվիրում ծաղկե խաչը, վերցնում ծաղկաբաժինը (մի քանի կոնֆետ, միրգ) և բռնում ծաղկաշատ դաշտի ճանապարհը: Երեխաները շրջան կազմած նստում են ծաղիկների մեջ, իսկ սպիտակ շղարշով ծածկված մի աղջիկ հերթով հանում է երեխաների գցած վիճակները: Սկսվում է խաղիկների արտասանությունը: Միջոցառումն սկսվում և ավարտվում է տերունական աղոթքով: Երեխաները հստակ պատկերացնում են Համբարձման տոնի իմաստը և գիտակցում դրա խորհուրդը:

Մեզ մոտ արդեն ավանդույթ է դարձել մեծ շուքով ու ոգևորությամբ տոնել նաև Վարդավառը: Այդ օրը երեխաները ծնողների ուղեկցությամբ այցելում են եկեղեցի և ստանում քահանայի օրհնությունը: Այնուհետև մանկապարտեզի բակում երեխաները միմյանց և մայրիկների հետ խաղում են «ջրոցի», երգում և արտասանում: Հիմնականում օգտվել ենք Գրիգոր նարեկացու ստեղծագործություններից: Տաղերը մանկականացվել են, սակայն ջանացել ենք պահպանել դրանց ազգային ոգին և կռուցվածքը:

Տոնի վերջում երեխաները օգտվում են մայրիկների բացած սուփրա-սեղաններից և ուրախ տրամադրությամբ վերադառնում տուն:

Նման միջոցառումները մանկական հուզաշխարհում դառնում են վառ հիշողություն և ուղեկցում ողջ կյանքի ընթացքում:

ԳԼՈՒԽ 2.

Սուրբ Զատկի տոնակատարությունը որպես հայեցի դաստիարակության յուրահատուկ միջոց:

Զատկի ակունքները գալիս են բնապաշտական ժամանակաշրջանից Այն գարնան զարթոնքի, բնության կենարար ուժերի տոնն է եղել՝ նվիրված մեռնող-հառնող բնությունը, որ մարմնավորել է Արա Գեղեցիկի պաշտամունքը: Ինքը, զատիկ բառը, ծագում է զատել, առանձնացնել բայից: Զատիկը նաև մայր Անահիտին նվիրված տոն էր: Հնում Զատիկի խորհրդանիշերն էին համարվում խոհանոցի տիրուհին համարվող Ուտիս տատի ու Պաս պապի ծղոտո տիկնիկները:

Զատիկի տոնական սեղանին հայերը ձվերը դնում են փոքր ափսեների մեջ աճեցրած ցորենի մեջ, որն անվանում են «Աձիկ»: Աձիկը համարվում է մեռնող ու հառնող կյանքի հորհրդանիշ: Այսինքն՝ ցորենը ցանում ես՝ մեռնում է, հետո ծլում է ու միջուկից դուրս գալիս կանաչը՝խորհրդանշելուվ նոր կյանքի սկիզբ:

Քրիստոնեության ավելի ուշ շրջանում Զատիկը նշվում է որպես Հիսուսի հարության օր: Ավետարանի համաձայն Հիսուսը խաչվելուց հետո հարություն է առնում մեռելներից ու համբարձվում երկինք: Զատկի օրը հավատացյալները բարևի փոխարեն միմյանց ավետիս են հայտնում «Քրիստոս հարյավ ի մեռելոց», իսկ պատասխանն է՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Այդ օրը վաղ առավոտյան եկեղեցիներում պատարագ է մատուցվում, ապա մատաղ բաժանվում:

Ձվախաղն ու ձու ներկելու սովորությունը գալիս է բնապաշտական ժամանակաշրջանից:

Զատկի խորհրդանիշը Հազարան հավքի ածած գույնզգույն ձվերն են:

Քրիստոնեությունը ընդունելուց հետո Զատիկը ևս ի թիվս այլ տոների, հարմարեցվեց նոր հավատքին և պահպանվեց նաև ձվախաղերն ու ձու ներկելը, մի տարբերությամբ միայն՝ համաձայն եկեղեցու, ձուն պետք է ներկել միայն կարմիր գույնով:

Միջնադարյան հայ մտածողներ Գրիգոր Տաթևացին ու Հովհաննես Երզնկացին մեկնաբանել են զատկի ձվերի իմաստը: Ըստ նրանց, ձուն բովանդակ տիեզերքն է, կեղևը՝ երկինքը, սպիտակուցը՝ ջուրը, իսկ դեղնուցը դա երկիրն է: Ձուն կարմիրով ներկելը խորհրդանշում է այն, որ աշխարը Հիսուսի արյունով է պատվել:

Այս տոնը մանկապարտեզում վերածվում է մի շքեղ հանդիսության: Այն իսկական հայեցի դաստիարակության հրաշալի օրինակ է: Կարևոր է, որ տոնակատարության կազմակերպիչները պահպանեն ծիսակարգը և երեխաներին ընկալելի դարձնեն դրա բովանդակությունն ու աստվածային խորհուրդը:

Թե մեծերը, թե փոքրերը անհամբերությամբ սպասում են Զատկի տոնակատարությանը:

Երեխաները ուռենու ճյուղերով, զատկի թեմայի նկարներով, կոլաժներով զարդարում են դահլիճը և մուտքը: Դահլիճում երեխաների սեղանները և աթոռակները այնպես է դասավորված, որ ամեն սեղանի շուրջ նստելու են տատիկները իրենց թոռնիկների հետ: Սեղաններին զուտ հայկական ուտեստներ են՝ լավաշ, պանիր, ածիկ, հալվա, գաթա, փոխինդ, բրինձով, չամչով փլավ և զամբյուղով գունավոր ձվեր՝ օրվա խորհրդանշը:

Սկսվում է հանդեսը՝ երեխաները կազմում են խաչի տեսարան և արտասանում են տերունական աղոթքը: Այնուհետև ավետում են Քրիստոս հարյավ ի մեռելոց», իսկ պատասխանն է՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»: Դաստիարակը վառում է մոմերը, երեխաները արտասանում են, երգում, պարում, փոքրիկ թատերականացված օպերա բեմադրում: Բոլոր ելույթներում կարմիր թելի նման անցնում է զատկական թեման: Այնուհետև հաջորդում են հանելուկները: Դրանց խանդավառությամբ պատասխանում են նաև տատիկները: Մեծ ոգևորություն է դահլիճում, երբ տատիկները մասնակցում են երգի և ասմունքի մրցույթին: Դրան հաջորդում է ձվերի խաղը: Միջոցառման վերջնակետը դառնում է հայկական ժողովրդական պարը, որին մասնակցում են տատիկները, բոլոր մեծերը և փոքրերը:

Հրաշալի տրամադրությամբ ավարտվում է միջոցառումը: Զատիկի, ինչպես նաև Համբարձման ու Վարդավառի տոնակատարությունները սրտամոտ են երեխաներին: Դրանք հայեցի դաստիարակության ու կրթության, գեղագիտական, բարոյական, ինչու չէ, նաև պատմական անցյալը իմանալու, գնահատելու և սովորելու տեսակետից, հրաշալի դասեր են և հարստացնում է մանկական մաքուր ու ջինջ հոգեաշխարհը:

Խաղողօրհնեք

Ինչպես ընդունված էր վարդավառին առաջին խնձորն ուտետել, այս տոնին էլ առաջին խաղողն էին ուտում և օրհնում: Քրիստոնեության օրոք խաղողի առաջին բերքը տանում էին եկեղեցի, կամ քահանան էր գնում խաղողի այգին և այնտեղ կատարում էր խաղողօրհներքի կարգը:

Տոնի ժամանակ շատ տարածված են եղել ազգային խաղերը, երգն ու պարը:

Քրիստոնեությունն այս տոնը վերափոխեց և նշում է որպես Մարիամ Աստվածածնի վերափոխման օր:Ողջ քրիստոնյա աշխարհը այս տոնը նշում է օգոստոսի 15-ին, հայ եկեղեցում այն շարժական է և նշվում է տվյալ շաբաթվա կիրակի օրը:

Խաղողօրհնեքի հիմնական գաղափարը բերքի օրհնությունն է: Քանի որ տոնը նշվում է խաղողի հասունացման շրջանում և ավանդաբար այս օրը խաղող է օրհնվել, առաջին ողկույզը ճզմվել, ժողովուրդն այն ավելի շատ ընկալում և նշում է որպես խաղողօրհնեք, քան Աստվածածնի վերափոխման օր:

Այս օրը քաղված առաջին ողկույզները մարդիկ եկեղեցի են տանում, որպեսզի քահանան օրհնի: Սա անշուշտ բնապաշտական ժամանակներց եկող սովորույթ է:

Այս տոնակատարությունը երբեմն բաց դաշտում էր կատարվում: Սա անշուշտ, հարմարեցվել է մարդկանց կենցաղին, որպեսզի ուխտավորները բոլորն առանձին առանձին խաղող չքաղեն ու եկեղեցի չտանեն, ուղղակի հրավիրում են քահանային դաշտ, ուր նա օրհնում է խաղողի վազերը:

Խաղողօրհնեքից հետո խաղողի զոհաբերություն-նվիրատվություն է կատարվում. մարդիկ օրհնված խաղողի ողկույզներ են դնում քարերին՝ նվիրելով անծանոթ անցորդներին և երկնքի թռչյուններին: Ապա սկսվում է ժողովրդական տոնախմբությունը: Երբեմն տոնն ուղեկցվում էր ուխտագնացությամբ, իսկ բուն ուխտի վայրում անպակաս էր զվարճանքները, կեր ու խումը, ժողովրդական երգն ու պարը, ազգային խաղերը:

Բարեկենդան

Բարեկենդանը խրախճանքի ու զվարճանքի տոն է: Այն նշվում է Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ Պաս ընկած ժամանակաշրջանը, իսկ Բուն Բարեկենդանը Մեծ Պասի նախորդող կիրակին է:

Բարեկենդանի տոնական ուտեստների մեջ նախապատվելի են առատ մսով, յուղով, կաթնեղենով ուտելիքները: Բարեկենդանին գործածական էին ոչխարի, տավարի, խոզի և թռչնի մսից պատրաստած ուտեստները: Բարեկենդանի սեղանների անբաժան ուղեկիցներ էին նաև գաթան և հալվան: Վերթին օրը երեկոյան կաթնապուր ու մածուն էին ուտում, վրայից խաշած ձու:

Բարեկանդանը ավելի մեծ շուքով է նշվել, քան ամանորը, որովհետև բարեկենդանի տոնը նախապատրաստական ծիսական արարողակարգ էր՝ երկրագործական նոր տարին սկսելու: Բարեկենդան բառը հավանաբար առաջացել է բարի կենդանություն բառակապակցությունից:

Բարեկենդանը իսկական ժողովրդական տոն էր: Այս օրերին հայոց համայնքներում իսկական <<խոսքի ազատություն>> էր: Ամենն ասում էին ինչ կամենում էին:

Հաշտվում էին խռովները: Բարեկենդանին նեղանալ չէր կարելի: Մարդկանց բերանից անպակաս էր կատակը: Այն իսկական տոնախմբություն էր երգ ու պարով, ուրախ խոսքով, հումորով, խաղերով…

Բարեկենդանի ուրախ ու կատակային բնույթը ցուցադրելու համար ավելորդ չենք համարում մեջբերել Հովհաննես Թումանյանի <<Բարեկենդանը>> հեքիաթը:

Պարապմունքի պլան

Թեմա «Սուրբ Զատիկ»

Նպատակը- Երեխաներին հաղորդել գիտելիքներ ազգային,քրիստոնեական տոներից մեկի Սուրբ Զատկի մասին:

Երախաներին ընկալելի դարձնել Զատկի տոնի բովանդակությունն ու աստվածային խորհուրդը: Զարգացնել թիմային և զույգերով աշխատելու կարողություններ:Հարստացնել բառապաշարը նոր բառերով «կուլիչ», «ածիկ», «հարյավ»**:**

Անհրաժեշտ նյութեր- խմբասենյակի պատերին փակցված է Զատկի տոնին նվիրված,երեխաների ձեռքով պատրաստված պաստառներ,խմբային աշխատանքներ: Սեղանին դրված է երեխաների ձեռքով նախապես ցանած ցորենի կանաչ ծիլերը,որոնց մեջ երեխաները պետք է դասավորեն իրենց ներկած և նախշազարդած ձվիկները: Մի անկյունում դրված է կենաց ծառը,որը պետք է ձևավորեն երեխաները:

Սեղանին դրված է նաև Զատկի կերակրատեսակներ (գաթա,հալվա,չամչով փլավ,կարմիր ներկած ձվիկներ…):

Խթանման փուլ- Երեխաներ այն ո՞ր տոնն է, որ ներկում ենք կարմիր ձու:Եփում ենք չամչով փլավ և խմում ենք կարմիր գինի:

-Դուք էլ մտածեք հանելուկներ,որոնք նվիրված են Զասկի տոնին:

Լսել երեխաների առաջարկած հանելուկները:

Իմաստի ընկալման փուլ-Երեխաները կազմում են խաչի տեսարան և արտասանում տերունական աղոթքը: Այնուհետև ավարտում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Հնչում է պատասխանը «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»:

-Երեխաներ այսօր մեր պարապմունքը նվիրված է Զատկի տոնին:

Սուրբ Զատկի տոնը նշում ենք գարնանը:Զատիկը կամ Քրիստոսի հարության տոնը հայ ժողովրդի ամենասիրված տոներից մեկն է:Սուրբ Զատիկը ուրախության տոն է,այն կոչվում է նաև «Հարության տոն»**:** Քրիստոնեական եկեղեցու այդ մեծագույն տոնը

խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի հարությունը:Այդ օրը հայկական ընտանիքներում պատրաստում են չամչով փլավ,նոր քաղած կանաչիներից աղցաններ,ձուկ,կարմիր ներկած ձվիկներ: Ձու ներկելը խիստ կարևոր ավանդույթ է հարության տոնին: Ասում են,երբ Հիսուսը փոքր էր խաղալ հավերի հետ և կերակրել նրանց: Հիսուսի մայրը ձվերը նախշազարդում էր և որպես խաղալիք տալիս Հիսուսին: Սարիներ անց,երբ Հիսուսին դատում են,մայրը գնում է Պիղատոսի մոտ,որ հանդարտեցնի նրան և իր հետ տանում է գոգնոցի մեջ թաքցրած ներկած ձվեր:Երբ նա խոնարհվում է Պիղատոսի առաջ,գունավոր ձվերը թափվում են գոգնոցից և գլորվում ամբողջ աշխարհով մեկ: Այդ ժամանակից ի վեր Զատկի տոնին ձվերը ներկում են կարմիր գույնով: Զատկի ձվի խորհուրդը հետևյալն է:

Ձուն բովանդակ տիեզերքն է,կեղևը՝երկինքը,սպիտակուցը՝ ջուրը,,իսկ դեղնուցը դա երկիրն է:Ձուն կարմիրով ներկելը խորհրդանշում է,որ ածխարիը Հիսուսի արյամբ է պատվել: Չամչով փլավի խորհուրդն էլ սա է. Բրինձը խորհրդանիշն է ամբողջ աշխարհի ժողովրդի,իսկ չամիչը քրիստոնյա ժողովրդի:

-Երեխաներ մենք սովորել ենք ոտանավորներ նվիրված Զատկի տոնին,եկեք արտասանենք:

-Բարի լուրի զանգեր զարկեն՝

Զնգզնգալեն անուշ- անուշ,

Լույսը բացվեց մեր աշխարհին՝

Զարկի լուրով անուշ- անուշ:

-Մեծ Զատիկն է,սուրբ Զատիկը,

Եկեք նշենք այս սուրբ տոնը,

Երբ Հիսուսը նորից ծնվեց

ԵՎ իր օրհնանքը մեզ տվեց:

-Սովորել ենք նաև երգ « Բարի լուր» երգենք այդ երգը

-Նորն է ծնունդ առնում էսպես

Ու շարունակ պտույտ գալիս,

Դա հրաշք է,ուրիշ է ի՞նչ

ԵՎ անունն է այդ հրաշքի՝

Հարություն կամ կարմիր Զատիկ:

Երգ «Տարվա մեջ ուրախալի»:

Առաջարկել հանելուկ

Ուլուլիկ- Պուլուլիկ,

Ոչ դուռ ունի, ոչ երդիկ:

Առաջարկել երեխաներին իրենք ասեն հանելուկներ Զատկի տոնին նվիրված:

-Այն ի՞նչն է, ի՞նչը,

Շնչավորից անշունչ ելավ,

Անշունչից էլ՝ շնչավորը:

-Այո, ձուն է՝ Զատկի խորհրդանիշը:

Երեխաներ,այս ի՞նչ ձայն է լսվում:

Պատրաստված մեծ ձվից լսվում է կտկտոց: Ապա այն ջարդվում է, և դուրս է գալիս մի երեխա՝ճուտիկի հագուստով,և թռչկոտելով մի պտույտ է գործում ձվի շուրջը:

Երեխաներ եկեք երգենք ուրախ երգ-պար «Յալալի»:

Արտասանել

-Կարմիր-կանաչ ձվիկներով

Խաղալ ուրախ ու կռվարար,

Ջան ինչ լավ է,որ Զատիկ է,

Սեղաններին շատ ձվիկ է:

-Դե, շուտ արեք, շուտ արեք,

Բոլորդ այստեղ եկեք

Ձու, հասցրեք,շուտ բերեք,

Եկեք արագ հավաքվենք,

Մկս մեկու մենք հաղթենք:

-Տոն է այսօր, ուրախություն,

Սեղաններին առատ, լիություն,

Դեղին,կարմիր,կապույտ,կանաչ

Ձվիկներն են մեզ ճանաչ:

Տոնական են սեղանները,

Գաթա,հալվա,չամիչ,փլավ,

Ուտելիքներ շատ համեղ,

Ինչ լավ է,լավ, եկեք այստեղ:

Երգենք «Չամչով փլավ» երգը

Երգելու ընթացքում տատիկի ձեռքին սկուտեղի վրա, դրված է զամբյուղով փլավ, որի մեջ ձու է թաքցրած:

Տատիկ-Տեսնենք ձուն ում ափսեյի մեջ կհայտնվի, ում է ժպտալու բախտը:

Սկսվում է «Գտիր ձուն» խաղը:

Խաղից անմիջապես հետո երեխաներին բաժանվում ձվիկներ և սկսվում է ձվով կռվախաղը:

Խաղերից հետո պարապմունքը ամփոփել հարցերի միջոցով:

- Երբ ենք նշում Զատիկի տոնը

- Որն է Զատիկի տոնի խորհրդանիշը

- Ինչ է խորհրդանշում ձուն

- Ինչ է խորհրդանշում չամիչով փլավը

- Ինչպես են մարդիկ իրար ողջյունում այդ օրը

- Զատիկի տոնին ինչ ուտեստներ են պատրաստում

- Այս տոնը ձեր կարծիքով ուրախ տոն է թէ տխուր

- Ինչու է ուրախ

Կշռադատման փուլ – Զատիկի տոնը սիրելի է բոլորին: Ինչպես Նոր տարին ունի իր ավանդական տոնածառը, Զատիկն էլ ունի իր ծիսական ծառը, որը կոչվում է ցանկությունների ծառ: Այդ Ծառից կախու են գունավոր ձվեր: Եկեք միասին զարդարենք մեր ծիսական ծառը:

Երեխաներին բաժանել ձվիկներ, ջրաներկ: Առաջարկել գեղեցիկ ներկել, նախշազարդել ձվիկները և զարդարել ծառը:

Եզրակացություն

Եվ այսպես ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումները, եկանք հետևյալ եզրահանգումների՝

1. գործնական աշխատանքը ցույց տվեց,որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական,բնական, անկաշկանդ միջավայրում կիրառում է իր գիտելիքները,հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը:

Ճիշտ է մանկահասակ երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերի իմաստն ու նշանակությունը, սակայն նրանց ճիշտ ուղղորդելով և օրինակ ծառայելով, կարելի է շատ մեծ արդյունքների հասնել: Նպաստել երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքներին ձևավորմանը:

2. Երեխաները երգելով, պարելով, արտասանելով և խաղալով ներկայացնում ոն իրենց գիտելիքները տոների մասին:

Երեխան քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ յուրացնում է ծեսի իմաստն ու բովանդակությունը:

Գրականության ցանկ

- Վահե Անթանեսյան «Հայը լեռներում,Հայոց տոներ»
- Լալա Սմբատյան «Տոնական Ղողանջներ»
- 5-6 տարեկաններ. դաստիարակի ուղեցույց
- Նախադպրոցական մանկավարժություն,ձեռնարկ
- Նախաշավիղներ